

**«2018թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 9-ԴՂ ՄՐՑԱՇԱՐԻ
V ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼ**

«2018թ. ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 9-րդ մրցաշրջանի 5-րդ ընտրական փուլին ներկայացվել է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Առավելագույն միավորների թիվը կազմում է 20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների թիվը կազմում է 30 միավոր:

Հինգերորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից, ինչպես նաև 1-5 փուլերից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Հինգերորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2018թ. դեկտեմբերի 2-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2018թ. դեկտեմբերի 3-ին:

ՈՒՇԱՂՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2019 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

**«2018թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 9-ԴՂ ՄՐՑԱՇԱՐԻ
V ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ՝ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐՈՎ**

1. Այնպիսի հատուցումների պլանը, ըստ որի կազմակերպության պարտականությունը սահմանափակվում է այն գումարով, որը նա համաձայնել է հատկացնել հիմնադրամին և, որպես հետևանք, ակտուարային և ներդրումային ռիսկերը ընկնում են աշխատակցի վրա, դասակարգվում է որպես՝

ա) սահմանված հատուցումների պլան.

բ) սահմանված մասհանումների պլան.

գ) սահմանված հատուցումների պլան, եթե ներդրումային ռիսկը էական է, հակառակ դեպքում՝ սահմանված մասհանումների պլան.

դ) սահմանված հատուցումների պլան կամ սահմանված մասհանումների պլան՝ կախված կազմակերպության կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականությունից:

2. Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի և ֆինանսական հաշվետվությունների՝ ներկայացման համար վավերացնելու ամսաթվի միջև որոշակի դեպքեր տեղի ունենալու պարագայում ե՞րբ է կազմակերպությունը ճշգրտում իր ֆինանսական հաշվետվությունները՝

ա) երբ տեղի են ունեցել դեպքեր, որոնք հաստատում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ առկա եղած պայմանները.

բ) երբ տեղի են ունեցել դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո առաջացած պայմանները.

գ) երբ տեղի են ունեցել այնպիսի դեպքեր, որոնք այնքան էական են, որ դրանց հետևանքի չարտացոլումը կդարձնի ֆինանսական հաշվետվությունները ոչ արժանահավատ.

դ) և «ա», և «բ», և «գ» կետերում նշված հանգամանքներում:

3. Ընթացիկ պարտավորությունները սահմանվում են որպես պարտավորություններ, որոնք՝

ա) ակնկալվում է մարել կազմակերպության սովորական գործառնական փուլի ընթացքում.

բ) ենթակա են մարման հաշվեկշռի ամսաթվից հետո տասներկու ամսվա ընթացքում.

գ) միաժամանակ բավարարում են «ա» և «բ» կետերում նշված պայմաններին.

դ) բավարարում են «ա» կամ «բ» կետերում նշված պայմաններից մեկնումեկին:

4. Նշվածներից որը պարտադիր չէ, որ բնորոշ լինի իրենից հետադարձ վարձակալությամբ վաճառք հանդիսացող գործարքին՝

ա) վաճառված ակտիվը վաճառողին տրվում է ֆինանսական վարձակալության.

բ) վարձավճարները և վաճառքի գինը պետք է պարտադիր հավասար լինեն միմյանց.

գ) վաճառքի գինը պետք է հավասար լինի վարձակալված ակտիվի իրական արժեքին.

դ) նշվածներից ոչ մեկն էլ պարտադիր բնորոշ չէ իրենից հետադարձ վարձակալությամբ վաճառք հանդիսացող գործարքին:

5. Հիմնադիրներից ոչ նյութական ակտիվների ստա-ցում՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում՝

ա) Դերետ 131

Կրեդիտ 421

բ) Դերետ 131

Կրեդիտ 529

գ) Դերետ 131

Կրեդիտ 312:

6. Հետ գնված բաժնետոմսերի վերավաճառքի գնի և հետգնման գնի դրական տարբերության ձևակերպում

(երբ տեղաբաշխման և վճարման պահերը համընկնում են)՝

ա) Դերետ 252

Կրեդիտ 313.

բ) Դերետ 252

Կրեդիտ 314.

գ) Դերետ 252

Կրեդիտ 621:

7. Ակտիվների վերաբերող շնորհների գծով եկամտի արտացոլում՝

ա) Դերետ 111

Կրեդիտ 628.

բ) Դերետ 628

Կրեդիտ 421.

գ) Դերեա 421
Կրեդիտ 628:

8. Կառավարության որոշման հիման վրա ապրանքների մատակարարման հարկաման բազան հավասար է՝

- ա) իրացման իրական արժեքին.
- բ) իրացման իրական արժեքին (առանց ԱԱՀ).
- գ) 0:

9. Գործակալական պայմանագրով աշխատող ԱԱՀ վարողի համար հարկման բազա է հանդիսանում իրացման ամբողջ արժեքը, եթե՝

- ա) Գործակալը հանդես է գալիս իր անունից և իր հաշվին.
- բ) Գործակալը հանդես է գալիս պրինցիպալի անունից և իր հաշվին.
- գ) Գործակալը հանդես է գալիս պրինցիպալի անունից և պրինցիպալի հաշվին:

10. Շրջանառության հարկով աշխատող կազմակերպությունների համար ներված կրեդիտորական պարտավորությունը հարկվող եկամուտ է համարվում՝

- ա) Այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ լրանում է 365 օրը.
- բ) հաջորդ հաշվետու եռամսյակում.
- գ) հարկման բազա չի համարվում:

**«2018թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 9-ԴՊ ՄՐՑԱՇԱՐԻ
V ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ
ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԸ**

Կազմակերպությունը հանդիսանում է ձկնաբուծության ոլորտում աշխատող կազմակերպություն: Զբաղվում է արտադրությամբ և մանրա-մեծածախ առևտրով: Գործունեությամբ զբաղվում է 2017թ. դեկտեմբերի 1-ից: 2017 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում ձեռք է բերել 45000 հազ. դրամ սկզբնական արժեքով /30 000 կադաստրային արժեք/ արտադրական տարածք /շինություն/, համակարգչային-հաշվողական տեխնիկա 10 միավոր՝ յուրաքանչյուրը 300 հազ. դրամ սկզբնական արժեքով, արտադրական և գրասենյակային գույք՝ 10 000 հազ. դրամ արժողությամբ յուրաքանչյուրը 1000 հազ. դրամ: 2018թ. ընթացքում կատարել է հետևյալ գործարքները.

Եկամուտներ	Չազ. դրամ
1. Արտադրանքի իրացումից եկամուտ մեծածախ վաճառք՝ առանց ԱԱՀ	640 100
2. Արտադրանքի իրացումից եկամուտ մանրածախ վաճառք	256 800
3. ՀՀ-ում գտնվող անշարժ գույքի վարձակալությունից եկամուտ, որը ստացվել է ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձից	8 400
4. Հիմնադրին տրամադրած փոխառությունից տոկոսային եկամուտ	18 000
5. Գույքի վարձակալությունից եկամուտ	1 580
6. Բանկային ավանդից տոկոսային եկամուտ	1 600
Նվազեցվող ծախսեր	
	Չազ. դրամ
1. Իրացված ապրանքների ինքնարժեքը	385 000
2. Իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված՝ փաստաթղթերով չհիմնավորված նյութական ծախսեր՝ ներառյալ դրանց գծով հաշվարկված եկամտային հարկի գումարը	48 000
3. ՀՀ ռեզիդենտ կազմակերպություններից ստացված փոխառության գծով տոկոսային ծախս	8 300
4. ՀՀ տարածքից դուրս կատարված կադրերի վերապատրաստման ծախսեր (5 աշխատողի համար)	2 400
5. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ, հաշմանդամներին հաշվարկված աշխատավարձ	7 500

Որոշել 2018թ. արդյունքներով որոշվող շահույթը /վնասը/ և շահութահարկի գումարը:

Պատասխան՝

Եկամուտներ	Հազ. դրամ ֆինանսական	Հազ. դրամ հարկային
1. Արտադրանքի իրացումից եկամուտ մեծածախ վաճառք՝ առանց ԱԱՀ	640100	-
2. Արտադրանքի իրացումից եկամուտ մանրածախ վաճառք	256800	-
3. ՀՀ-ում գտնվող անշարժ գույքի վարձակալությունից եկամուտ, որը ստացվել է ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձից	8400	-
4. Հիմնադրին տրամադրած փոխառությունից տոկոսային եկամուտ	18000	-
5. Գույքի վարձակալությունից եկամուտ	1580	-

6. Բանկային ավանդից տոկոսային եկամուտ	1600	-
	926480	-
Նվազեցվող ծախսեր	Հազ. դրամ	Հազ. դրամ
1. Իրացված ապրանքների ինքնարժեքը	385000	-
2. Իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված՝ փաստաթղթերով չհիմնավորված նյութական ծախսեր՝ ներառյալ դրանց գծով հաշվարկված եկամտային հարկի գումարը	48000	-
3. ՀՀ ռեզիդենտ կազմակերպություններից ստացված փոխառության գծով տոկոսային ծախս	8300	-
4. ՀՀ տարածքից դուրս կատարված կադրերի վերապատրաստման ծախսեր (5 աշխատողի համար)	2400	-
5. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ, հաշմանդամներին հաշվարկված աշխատավարձ	7500	-
6. ամորտիզացիա		-
	451200	-

1. Այլ եկամուտները չեն գերազանցում համախառն եկամտի 10%-ը:
2. Հմանաձայն ՀՕ 126 հոդվածի մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները: